



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ltin

1807

1999

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐՔՈՒԳԱՆԵԱՆ
Գ

Ս Ա Ղ Մ Ո Ս

Ի Ս Ր Ա Յ Է Լ Ի

«Ուխտիւք խնդրէի ես իսկ ինք-
նին նզով լինիլ ի Քրիստոսէ,
վասն եղբարց իմոց եւ ազգա-
կանաց ըստ մարմնոյ:»

Թղթ. Պօղ. առ Հռովմ. Թ. 3.



Մ Ա Ր Ս Է Ն

Հայերէն Տպարան Մ. Փորրուգաւեանի
Marseille. — Imp. du Midi, M. SCHICKLER, rue Vacon, 50.

1886

. . . Հայրենակիցներ !

Հայոց հարցը մեճուած և բազմա-
կընճիւ է, ինչպէս ԳՈՐԴԵԱՆ ՀԱՆ-
ԳՈՅՅԸ, գորան կը լուծի միայն ՍՐԻ
ՀԱՐՈՒԱԾԸ. իսկ այժմ մաքուր սըր-
տերով ինդրենք Տիրոջ, որ նա շու-
տով հասցնի մեզ

ԱՂԷՔՍԱՆԴՐ ՄԵԾԸ:

41807-60

ՀԲ 1813

ԻՍՐԱԵԼ

ՍԱՂՄՈՍ ԻՍՐԱՅԷԼԻ



ՍԱՂՄՈՍ Ա.

«Ի նեղութեան իմում ես առ
Տէր կարգացի, և առ Աստուած
իմ աղաղակեցի» :

ՍԱՂՄՈՍ ԴԱԽԹԻ

Տէ՛ր, եղբայրս ամենայնայ մատ-
նուած, մի՞թէ կներես իմ լռութիւնը :

Ազալակ եմ բարձրացնում Քո ա-
թոռին, Տէ՛ր, ունկն դիր Քո ծա-
ռային :

Դու մեզ անյայտի սկիզբը գիտես,
վախճանը գիտես, գիտես և մեր թը-
շուառութիւնը առանց Քեզ յայտնե-
լու :

Տէ՛ր, եթէ Քո խորհուրդները՝ Քեզ
յայտնի նեղութիւնները պատմելով՝

պիտի խանդարեմ, հրամայի՛ր որ լռեմ:

Դիտեմ՝ որ ուրախութեան մեջ փորձում ես ազգերին եւ նեղութեան մեջ խրատում, ուստի եւ չեմ իշխում:

Չեմ իշխում եւ ամաչում եմ, քանզի փառքի եւ երջանկութեան մեջ չ'իշխեցինք թէ Աստուած կայ:

Թէ Դաւիթ ծառայիդ պէս կրկին յիշեցինք Քեզ, ճանաչեցինք, որ նեղութեան մեջ չ'կայ այլ ապաստան, քան մեր Աստուածը:

Նեղութեան մեջ սուտ էր մարդկանց օգնութիւնը. բարեկամ բարեկամին մուսաւաճաւ, քոյրը եղբորը, որդին հօրը:

Ծանր օրերում, Տէ՛ր, Դու միայն ես օգնական եւ համբերութեամբ լսում ես նորան, որ չ'մուսաւաճեց Քեզ խաղառ:

ՍԱՂՄՈՍ Բ.

«Տէր զի բազում եղեն նեղիչք իմ եւ բազումք յարեան ի վերայ իմ»:

ՍԱՂՄՈՍ ԴԱԻԹԻ

Տէ՛ր, Դու քաջութիւն տուիր մեզ եւ լոյս, սակայն այսօր խաւարումն ենք նստած, երկիւղով պաշարուած:

Երկիւղը այնչափ մեծացաւ, որ յայդ ես սկսեց տկարանալ, ինչպէս հաւատը եւ սիրը:

Տկարացանք եւ մենք, որպէս ոստը ծառի, կատաղի փոթորիկից խորտակուած եւ վիրաւոր:

Դու, Տէ՛ր, թռչուններին անբաղդ քան մարդը ստեղծեցիր, սակայն ճշմարտեմ վիճակը երանելի է մեզ եւ նախանձելի:

Դու ձկներին ջուր տուիր, ծով եւ ովկիան, իսկ մեզ օթեան՝ Վանից մինչ Սեան:

Ձկները բնակվում, ապրում են ջրում, իսկ մենք լայիս մեզ տրուած հողի վերայ :

Հողը , որ ապրելու էր մեզ սահմանում , ծանր շղթաներով բանդ դարձաւ և ծով արտասուաց :

Տունը բանդ դարձաւ սոսկալի , բնակիչը ստրուկ ու գերի , հայը արիւն , ջուրը դառն քան լեղի :

Միժեռնակը երկու հայրենիք , երկու տուն ունի , մենք , Տէ՛ր , մէկից անդամ զրկուած :

Թշուառացւոյնք մենք , Տէ՛ր , սրպէս ծաղիկ պոկուած մեր Մայր-արմատից :

Դու անուշահոտ վարդեր անկեցիր մեր այգում , ուստի՞ այսչափ տառտակ վարդերը խեղդող :

Տէ՛ր իմ , Տէ՛ր իմ , այս անպտուղ փշերում , ո՛ր մեզքի համար պատրվում են Դո սիրած փոքրածիւ շուշանները :

Ազականուած ոգիները վերկացան կործանեցին Դո տնկած այգին՝ իմ սիրուն Հայրենիքը :

Տէ՛ր , մինչ ե՞րբ բռները խալոց , խոգերը ծաղիք ունենան , իսկ մենք վերքեր :

Մինչ ե՞րբ երկարը թշնամու մեռքում , մեր մեռքերը երկարում :

ՍԱՂԱՄՈՍ Գ.

« Համբարձի զաչս իմի շերտնրս , ուստի եկեսցէ ինձ օգնութիւն » :

ՍԱՂԱՄՈՍ ԳԱԽԹԻ

Տէ՛ր , մինչ ե՞րբ կերակրենք մեզ անհայ տանջողին , մինչ ե՞րբ հմենք յագեցնելու մեր զարմը հմոռին :

Մինչ ե՞րբ մեր աշխատին բողբոջները , մեզ շղթայող բողբոջները զօրայնելու :

Տէ՛ր , Հոյի համբերութիւնը յան-
ցանք համարուեցաւ , ուստի նորա
առաւազանքը իւր չափը անցաւ :

Մինչ ե՞րբ քրտինքով մեր ճակատը
թրջենք , վաստակը ջնջողին մենք արեւ
բաշխենք :

Ինքը հեղդացաւ , մեր վատտակով
ապրեց՝ յաղեցաւ , և այժմ՝ խմելու
մեր արխանէ ուգոսմ , արեա՛ն ծարաւին :

Մեր աշքերից արցունք է հոսում ,
իսկ այդ նորա վայրագ ծիծաղն է
շարժում :

Ապտակուած են մեր երկու ծնօտ-
ները , խլուած մեր բաճկոնն ու շա-
պիկը , մի՛թէ մերկանալ և վերջին
պատախից :

Տէ՛ր , չե՞ս լսում մեզ , լսի՛ր մեր ա-
նորդուած անմեղ քոյրերին , մեր զո-
հուած մատաղ գոտերայ :

Գեղեցիկութիւնը հոյ գոտերայ :
մինչ ե՞րբ պատիժ իւր հէ՞ղ ծնողայ ,
դ եղեցի՛կդ իմ Աստուած :

Տէ՛ր , չե՞ս լսում նոյա , լսի՛ր Քո Սաւրբ
տաճարներից , մի՛թէ սրբութիւնը պէտք
է ձգած չներին :

Հինգ դար է չունի սրբութիւն ,
զրկուեց և զրկվում է իմ Մալր-Աշխարհը
ի սէր թշնամու :

Հլու , հնազանդ սիրեցինք թշնա-
մուն , չուղեց նա մեր սէր , այլ սր-
պէս դազան՝ դիակ և արխն :

Մինչ ե՞րբ անդուժ տեսնել թըշ-
նամուն , ատել գոհուողին , սիրել գոհուողին :

Այսքան կրակի մէջ , արդարադատ
Տէ՛ր , մինչ ե՞րբ արխնը սառն՝ մեր
երակներում :

Մինչ ե՞րբ բանդարկուին քաջերը
Մատեաց խորանձաններում :

Մի՛թէ ժամանակ չէ ժայթքել հուրը
Մատեաց հսկայի տաճրուած կրծքից :

Մի՛թէ բոսական չէ սառը ձեան
ծածկել նորա ոսկեհեր ճակատը :

Մետաղները հալուեցան նորա շըն-

չից, մինչ ե՞րբ անկարող՝ ձիւնը հա-
լելու :

Եօթանասուն տարուայ գերութիւն
խորտակողդ Աստուած, հերիք ջե՞նց հալի
եօրը եօրանասուն տարիները :

~~~~~  
ՍԱՂՄՈՍ Դ.

Գուտանք Հայոց ողբասաց  
Ելէք ի գլուխ հէգ Մասեաց  
ԶՀայոց լացէք Մեծաց :

ԻՍՐԱՅԷԼ

Հայոց մայրեր գրկում զաւակ,  
ստինքներում կաթ, աչքերում ար-  
տասուք չունին, խնդացէ՛ք, Բերդեհ՝ մի  
մայրեր :

Հայ մանուկը կարօտ նժդեհ՝ հօրը,  
հայրը կարօտ զաւակին, ամուսին ա-  
մուսնուց մեռնում են կարօտ, խն-  
դացէ՛ք ցուրտ գերեզմաններ :

Հայ ընտանիքը գլխից զրկուած,  
գլուխը թանկազին իւր սրտից, վա-

դուց առանձին ապրում են մեռած,  
խնդացէ՛ք, դիակէր զագաններ :

Հայոց ել չկան գիւղեր, ամենքը  
հրով եղած են աւեր, խնդա՛ դժոխք,  
խնդա՛ դու Սողոմ :

Լա՛ց, Արմէն, լա՛ց, քո փառքից  
աւերակները անգամ չ'մնացին քեզ  
ժառանգութիւն :

Լա՛ց, ի՛մ Արմէնիւ, լա՛ց, քո զա-  
ւակները վատ ապրելու համար մեռնում  
են անարգուած :

Լա՛ց, Արմէն, լա՛ց, դու պատուով  
մեռնելու ջունիս ցանկութիւն, որ ապ-  
րիտ յարգուած :

Լացէ՛ք, լեռներ, լացի՛ր Այրա-  
րատ, լացէ՛ք բարձրածայն, Աստուած  
չի լսում, զի հեռացաւ նա ձեզանից :

Հայոց դուք, ողբասաց գուտանք,  
ելէ՛ք Մասեաց հէգ գլուխ, լացէ՛ք  
Մեծն Հայոց մեծ քշուառութիւնը :

Լացէ՛ք, հայ լճե՛ր, լացէ՛ք, մեր  
գետեր, ձեզ յամաքելու չկայ ճար-

Հնար , զի մեր բաց աչքերն են մեր մեծ վտակներ :



### ՍԱՂՄՈՍ Ե.

«Ոյք սիրէք զՏէր , ատեցէ՛ք զչարս թիւն . պահէ Տէր զանձինս սրբոց իւրոց . ի ձեռաց մեղաւորի փրկեացէ զնոսա» :

ՍԱՂՄՈՍ ԴԱԽԹԻ

Տէ՛ր , ներիր ինձ , ներիր եղբօրս , քանի մեր անձի համար մոռացանք միմեանց :

Իրարից բաժան , ալ ըը մոռացանք , ուստի թշնամին զօրացաւ մեզ կործանելու :

Թշուառացանք մենք երկօքեան . Դու մեզ մարդ ստեղծեցիր , իսկ մենք ստրուկ դարձանք :

Արդար է դատաւորանդ , Տէ՛ր , արդարայի պատիժը՝ որ հասաւ մեզ ատելութեան շարժիս :

Տգեղացրինք Քո մեղ տուած պատկերը . առանց Քո սիրոյ , այլ չենք Քո որդիք , որ կոչենք Քեզ «Հայր մեր» :

Այլ ևս սրբութեամբ չենք կարող յիշել «Քո անունը» զի պղծուած են մեր չրթունքը ի սէր մամենայի :

Մեր չրթունքը բաց և ազատ են ստութեան , մտմտութեան գործում , որպէս զի Հկատարուի «Քո կամքը» երկրում :

Այլ ևս «մեր հայրը» մեզ չի կշտայնում , բռնաւորն անհագ քողեկն է մեզ յապեցնում :

«Մեր պարտականներին» ձեռքից չենք թողնում , անսուքի տոկոսներից նրանց մահն է ազատում :

Ծանր փորձութիւնը և դժոխային վտանգները մեզ չեն սարսում երբէք , եթէ կործանումը եղբօր՝ անձնական մեծ շահ է խոստանում :

Տէ՛ր, «Քո տըրայութիւնը և զօրութիւնը և փառքը» խելու համար կատարելու պատրաստ ենք ամեն չարութիւն :

Եղբօրը, Տէ՛ր, անձի չափ սիրել պատուիրեցիր, Դու անձից աւելի սիրեցիր, իսկ մենք նորա սիրեցիք միայն արտասուք :

Հինգ զարստրութեամբ ազակահուեցանք. այս բարոյական անկման մէջ, Ամենահզօր Տէ՛ր, առաջ զօրութիւն Քո փոքրածիւ ծառայներին :

## ՍԱՂԱՐԱՍ Զ.

«Օգնութիւն ինձ ի Տեառնէ եկեացէ» :

ՍԱՂԱՐԱՍ ԴԱԻԹԻ

Մեզայ, Տէ՛ր, մեզայ, Քո տկար ձիւնն անգամ զօրաւոր է քաղաքներ կործանելու միտքեամբ :

Դու տկար մեծակին, քնքոյշ վարդին անգամ տուիր զէնք խայթելու :

Քո մեծ օրէնքով փոքր արմատները ի մի խմբուած պաշտպանում են մատաղ բունը կատաղի փոթորիկի գէմ : Յիմարացաւ ինքը սագը, ինքը ոչխարը, որ թողեց գէնքը պաշտպանութեան, մատնեց իրեն գերութեան :

Դու ատցիր, «մինչ մանանելի հառը ջընկնի գետին՝ մեռնի, շատ արդիւնքներ չի ունենայ» :

Տէ՛ր, մեր մեռած ապրողների խռատարտութեամբն է, որ ջնջվում են անելու համար մեռնողների ընձիւղները :

Տէ՛ր, վատ ապրելու համար մեռնում ենք անարդուած, իսկ պատուով մեռնելու չունինք ցանկութիւն, որ ապրենք յարգուած :

Դու փրկութիւնը խաչով, արիւնով գնեցիր, իսկ մենք Քո օրինակը թողած լացն ենք սիրում :

Լացում ենք, Տէ՛ր, ում առաջ .

ուչ Քո , որ շատ է մեր յանցանքը , այլ մարդասպան գողերի առաջ :

Լանք , Հայե՛ր , Լանք Տիրոջ առաջ .  
 թէ դեռ մահուկ ենք , ունինք մայր ,  
 մեր մօր առաջ , բայց ո՛չ թշնամու և  
 ոչ բորենու :

Օգնութիւնը Տէրիցը կ'գայ , նա  
 առեց մեզ զէնք Խր սերը , «խզենք  
 նոցա կապերը , ձգենք մեզնից նոցա  
 լուծը» լուծը անիրաւ :

~~~~~

ՍԱՂՄՈՍ Է.

«Երանի մարդոյ՝ զոր խրատես
 Դու Տէ՛ր , և յօրինաց Քոց ու -
 սուցանես Դու նմ» :

ՍԱՂՄՈՍ ԴԱԽԹԻ

Լսի՛ր , Հայ , Տէրը հեռանում , թող -
 նում է այն ազգին , որ հալածում է
 սեր եւ միութիւն :

Լսի՛ր , Արամեան , Տէրը ոյժ , զօ -

րութիւն պարգևեց Արամին , երբ թըշ -
 նամու դէմ միութիւնը յարգեց :

Լսի՛ր , Հայկա՛կ , Տէրը անաէր է թող -
 նում այն ազգին , որ չէ տիրանում
 ազնիւ ձգտումներին , որ չէ խրախու -
 սում բարի ձեռնարկութիւնները :

Լսի՛ր , Արմէն , Տէրը զօրութեանց
 սրբութիւն է սիրում , վանի՛ր քեզանից
 արատն ու ժանցը :

Լսի՛ր , Թորգոմեան , խրատուի՛ր ,
 ազգերը ապականութեամբ մաշվում ջրնջ -
 վում եմ , ինչպէս հզօր երկաթը թոյլ
 ժանգի առաջ :

Տե՛ս , Ասքանազեան , և դգուշա -
 ցիր , քեզ տանջող ազգը անբարոյա -
 կանութիւնը սիրեց և ուժից ընկաւ
 և փառքից մերկացաւ :

Լսի՛ր , Զարմիւր Արարատեան , սուրբ
 ձեռու մի մաքուր պահիր և սուրբ գործի
 համար Տէրը նորա երկաթի կանի :

~~~~~

## ՍԱՂԱՐՈՍ Ը.

«Մտցէ առաջիքս հեծութիւն  
կապելոց . ըստ մեծութեան  
բազկի քո շահեա՛ր Գու գորգիս  
սպանելոց» :

## ՍԱՂԱՐՈՍ ԳԱԽԹԻ

Լուեցէ՛ք , խաշեալին խաշող , դե-  
րեալին մեռցնող , մեռեալ թաղողներ ,  
դուք որ քարոզեցիք ստրկութիւն ,  
ստրկութիւն .

Լուեցէ՛ք , երկչոտ կրծողներ , դուք ,  
որ գերութեան չէք մասնակից եւ ի  
սէր ձեր անձի եւ պատառի կոչում էք  
համբերութիւն , համբերութիւն .

Լուեցէ՛ք , հաստակաշի ոնգեղջիւր-  
ներ , դո՛ւք՝ որ անողպայ էք հասած  
և հասանելի հարստածներին .

Դո՛ւք , ոչ ունիք ժամիր, եղջիրներ,  
ո՛չ թշնամու , այլ միմեանց հարուածելու ,  
լուեցէ՛ք :

Լուեցէ՛ք , հայի քրտնաթո՛ր մշակ-  
ներ , գերութեան մէջ շղթայի մաս-  
նուած զաւակներ ,

Ահաւասիկ ասում է Տէրը . «Բաղ-  
խեցիք եւ բացցի՛նք» . վկայ է նա , որ  
շատ խնդրեցի՛նք եւ շատ հայցեցի՛նք և ի-  
շուր անցաւ :

Բաղխեցի՛ք , խփեցի՛ք եւ կ'բացուի . Տի-  
րոջ հնազանդ՝ այգ պէս է վարժում  
ձուր մէջ բանդարկուած ճուռը :


Նորա թոյլ կոտոյշ վշտում է իւր  
բանդի պատերը . դե՛հ , օրհնեցէ՛ք  
Տիրոջ , դահայէք նորանից :

Սիրելի է Տիրոջ օրէնքը , սքանչելի  
կարգ ու կանոնը , օրհնեցէ՛ք Նորան ,  
դավեցէ՛ք Նորան :

Լուեցէ՛ք , դո՛ւք , որ «սակաւք էք  
ընտրեալք», դո՛ւք , որ «բազում աշ-  
խատեցայք և կաշայք ոչինչ» ,

Այսպէս է ասում Տէրը . «Մինչ մա-  
նանիսի հատը ջընկնի գետին՝ մեռնի ,  
շատ արդիւնքներ չի ունենայ» :

Մինչ է՞րբ ջընկնենք գետին սուր ի մե-  
ռին :



ՀՀ Ազգային գրադարան



NL0348341

